# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան, ՀՀ ԳՆ 06. 09. 2017թ.
ժամը՝ 17:40

Հանձնաժողովի կազմ
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ղուշչյան
Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Աբաջյան
Մ. Կարապետյան /բացակա/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ապերյան

**I. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին**

(Վ. Ղուշչյան)

1. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**II. «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հայտով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին**

(Վ. Ղուշչյան)

1. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ կողմից ներկայացրած փաստաթղթերը և արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Հավելված N 6.1-ով ներկայացված աղյուսաում հստակ նշված չեն ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, արտադրման տարեթիվը, երկարությունը, ընդհանուր բարձրությունը, անվամեջը, զանգվածն առանց բալաստի, շարժիչի աշխատանքային ծավալը, շարժիչի հզորությունը կվտ/ձիաուժ, շարժիչի հաստատուն հզորության ընդգրկույթ., շարժիչի առավելագույն պտտող մոմենտը, վառելիքի բաքի տարողությունը, փոխանցման տուփի տեսակը, ռևերսային մեխանիզմի տեսակը, պտտման նոմինալ հաճախականության ժամանակ մատուցումը, հիդրոբաշխիչի հատվածամասերի քանակը, խաչաձև լծակի տեսակը, բարձրացման առավելագույն ուժը, շրջադարձի շառավիղը, ճոճանակավոր քարշաձողի տեսակը, 4-կետանոց կախոցի տեսակը, օպերատորի նստատեղի տեսակը, ավտոմատ վարման համակարգի նախապատրաստման տեսակը, համակարգչային հեռահար կապի տեսակը:

Բացի դա պետք է հստակ նշել նաև առաջարկվող տեխնիկայի անխափան աշխատանքի և վերանորոգումների պարբերական ապահովման, երաշխիքային և ետ երաշխիքային սպասարկման վերաբերյալ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված պայմանի ապահովման մասին:

2. Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները՝ առաջարկել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել N 6.1 հավելվածի շտկված տարբերակը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Նախագահ ---------------------------- Վ. Ղուշչյան

Անդամներ ---------------------------- Խ. Աբաջյան

Քարտուղար ---------------------------- Ա. Ապերյան